

## ԱՆԻԻ ԵՐԱԺԾՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ

ԵՒ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՈՒԽՆ ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐՆԵՐԸ

Հայ միջնադարեան երաժշտական մշտկոյթի պատմութեան մէջ՝ Անին յատուկ տեղ է զբաւում: Որպէս միջնադարեան թագաւորանիստ եւ բարգավաճ մայրաքաղաք, Անին ժ. զարի վերջին քառորդից սկսած դառնում է գիտութեան եւ արուեստների զարգացման կենտրոն: Այդ դերը նա պահպանում է չուրչ երկու հարիւր տարի՝ Բագրատունեաց թագաւորութեան անկումից յետոյ:

Հսոս պատմիչների հայորդած տեղեկութիւնների, Անիում ծաղկել է ինչպէս ժողովրդական արհեստավարժ՝ գուսանական երաժշտութիւնը, այնպէս էլ՝ հոգեւոր երգարուեստը: Անիի բարձրագոյն տիպի զարոցներում մեծ տեղ է յատկացուել երգ-երաժշտութեան զաստանգմանը, քննարկուել են երաժշտութեան տեսութեան և գեղագիտութեան հարցեր, աշխատանքներ են տարուել երաժշտածիսական մատենաների համալրման ու խմբագրման ուղղութեամբ: Ժամանակի առաջադէմ գեղարուեստական ըմբռոնումներին համապատասխան՝ Անիում կատարելագործում էր պաշտօներգութիւնն ու ժամակարգութիւնը, իսկ աշխարհականացման խորացող ոգու ցայտուն զրսեւումների արգասիք են այդ շրջանից ու միջավայրից սերող տաղային արուեստի նմոյշները:

Արխատակէս Լաստիվերտցին այսպէս է նկարագրում Անիի քաղաքային կեանքը. «Ուրախական երգոց եւ բանից միայն լինէին հանդէս», ուր եւ ձայնիք փողոյն եւ ծնծղային եւ ա'լլ երգեցողական արուեստիցն զլսողացն անձինս լի առնէին ուրախական բերկրանօք»<sup>1</sup>: Անիին ուղղելով իր խօսքը Ներսէս Շնորհալին բացականչում է. «Դստերք բն՝ պանունալի, յերգ եւ ֆնար միշտ ի խաղի»<sup>2</sup>: Իսկ Մատթէոս Ռուհայե-

1. ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ Պատմորիւմ, երեւան, աշխ. Կ. Ն. Ցուզբաչեան, 1963, էջ 59:

2. Ողբ Եղիսիոյ, ասացեալ սրբոյն տեառն Ներսէսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի, Փարիզ, 1827, էջ 13:

ցու թեւաւոր գարձած խօսքը՝ «Հազար եւ մէկ եկեղեցի ի պատարագի կայր ի յԱՅի»<sup>3</sup>, վկայում է նաև այն մասին, որ Անիում գործել են բազմաթիւ կրօնաւոր երաժշտներ, որոնք պէտք է մայրաքաղաքին վայել կառարողական բարձր մակարդակով վարչին այդ եկեղեցիներում տարուող պաշտօներդութիւնը:

Անիի մշակութային մթնոլորտի կազմաւորման վրայ ներազդել են հայ միջնադարեան երաժշտարուեստին առընչուող այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Սարգիս Սեւանցի եւ Պետրոս Գետաղարճ կաթողիկոսները, Գրիգոր Մագիստրոսը, Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրը, որոնք պատմութեան մէջ մնացել են նաև որպէս շարականագիրներ: Այդ շրջանում գործած ա'լլ նշանաւոր երաժշտներից յայտնի են Մատթէոս Ուռչայեցու յիշատակած Խաչիկ Վարդապետը, «Որ էր երաժիշտ ի վերայ ճայնաւոր եղանակաց»<sup>4</sup>, Թէոդորոս Կաթողիկոս Ալափոսիկը՝ «Մեծ երաժիշտն եւ սիւն սրբոյ եկեղեցւոյ»<sup>5</sup>, Գրիգոր Մագիստրոսի նամակազիրներցից՝ Դանիէլ երաժշտուը, որին Մագիստրոսն անուանում է «Նոր որփեւս»<sup>6</sup>, Յակոբ Վարդապետ Սանահնեցին եւ ուրիշներ:

Այս շրջանում են իրենց համբաւը ձեռք բերում Տաթեւի, Սանահնի եւ Նարեկայ վանքերի բարձրակայն տիպի զպրոցները, որտեղ երգերաժշտութեան գասաւանդումը աւանդաբար զբաղեցնում էր իր արժանաւոր տեղը: Գրիգոր Մագիստրոսը, որն իր թղթերում մի շարք ուշագրաւ յիշատակութիւններ է թողել այդ ժամանակուայ վանքերում գործող վարդապետարանների մասին, այսպէս է բնութագրում Սանահնի զպրոցում տիրող մթնոլորտը. «... Զերիտասարդացն, որք ի վարժարանս, հետորական եւ երաժշտական զնոցայն զմտաւ ածեալ հանդէս եւ մրցումն եւ զգեղեցիկ մոլորդիւս վլանիկացն սաղմոսերգութիւնս Քաղցրանայնութեամբ վերառեցիալ»<sup>7</sup>: Զմոռանանք նաև, որ հենց այդ շրջանում՝ Ժ. զարի վերջին քառորդում, Նարեկայ վանքում ճգնում էր մեծն Գրիգոր Վրդ. Նարեկացին, կերտելով իր Ողբերգութեան մատեանը եւ սքանչելի գանձերն ու տաղերը:

Սակայն, առկայ էին նաև հակառակ միտումներ: Քաղաքային շուայտ ու ճոխ կեանքը, թագաւորական եւ իշխանական պալատների խնճոյքները, որոնց անբաժանելի մասը եւ զարդն էին կազմում գուստանների երգն ու նուազը, աշխարհիկ երաժշտութիւն հասցնում էին մինչեւ վանքերի պարիսպները եւ թափանցում ներս: Դրանք ծնում

3. ՄԱՏԹԵՈՍ ՈՒԹՀԱՅԵՑԻ, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 147:

4. Նոյն տեղում, էջ 244:

5. Նոյն տեղում, էջ 139:

6. ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, Թղթեր, ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 124:

7. Նոյն տեղում, էջ 136-137 (Թուղթ ԿԱ):

էին այնպիսի երեւոյթներ, որոնք անընդունելի էին եկեղեցու կողմից և արժանանում էին հոգեւորականութեան արդարացի պարսաւանքներուն։ Այսպէս, Անիին սպասող բազում չարիքների պատճառներից մէկը, Յովհաննէս Կողենն Վարդապետ տեսնում էր իշխանների և հոգեւորականութեան բարոյական անկման մէջ։ Նա բողոքում է, ասելով. «կրօնաւորք թողուն զանապաստ եւ զմենաստան ... եւ որոճալով որոճան զերգս զիւականս ... եւ փախչին ի ձայնէ սաղմոսերդութեանցն Աստուծոյ»<sup>8</sup>։ Գրիգոր Մագիստրոսի վկայութեամբ՝ «Ամենայն մրմունքը եւ երգը գուսանութեան» այնքան էին առաջանաւել, որ «այժմ ի հայում առաւել քան ի յունականին գտանեմք»<sup>9</sup>։ Այս բոլորը վկայում է զարգացած աշխարհիկ երաժշտութեան մասին, որ բարենպաստ հասարակական մժմնորոստում ճիւղաւորուել եւ բազմացել է ։ Սակայն, մենք մեր ուշագրութիւնը պէտք է ուղղենք հոգեւոր երաժշտութեան եւ աշխատենք ուրուագծել Անիում գործող եւ նրա հետ կապուած չարականագիրների տեղն ու վաստակը՝ հայ հոգեւոր երգաստեղծութեան ասպարէզում։

Անիին կապուած չարականագիրներից թերեւս առաւել նշանաւոր եւ բեղուն հեղինակը Պետրոս Գետաղարծ Կաթողիկոսն էր, որ իր ժամանակի ամենակրթուած եւ գիտուն մարդկանցից էր։ ԺԱ. գարի այդ խոշոր եկեղեցական-քաղաքական գործչի հակասական կերպարը, նրա բիւզանդասիրութեան տիրահաչակ պատղները, այնուամենայնիւ, չնսեմացրին ազգային չարականերդութեան մէջ թողած նրա հետքը։

Հաս բոլոր հասած տուեալների, պաշտօներդութեան երաժշտական կողմը մշտապէս եղել է նրա ուշադրութեան կենարոնում։ Դրան է նպաստել, հաւանաբար, նրա քաջատեղեակութիւնը բիւզանդական եկեղեցու և արքունիքի արարողական կարգին։ Նա յայտնի է եղել որպէս հմուտ պատարագի։ Դա ապացուած է պատմիչների կողմից արձանագրած այն հսկայական տպաւորութիւնը, որ թողել է ժամանակակիցների վրայ 1022 թուականի Յունուարի 2.ի Վասիլ կայսեր ներկայութեամբ նրա կատարած Զրօրհնէքի արարողութիւնը<sup>10</sup>։ Մեր կարծիքով, այն հանգամանքը, որ նշուած հանդէսը այդքան տուաւութիւնը, մեծաւ մասամբ պայմանաւորած էր նաև պատարագիչի արժանիքներով և ծէսի երաժշտական ձեւաւորմամբ։ Հայկական ծիսակարգում Զրօրհնէքի երգասացութիւն-

8. Н. МАРР, *Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне Спб.*, 1895, с. 16.
16. ՄԱՍԹԷՌՈՍ ՈՒԽԱՑԱՑԵՑԻ, չշ. աշխ., էջ 53։
9. ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, ՄԵԿԱՎԵՐԻՑ ԵԲԱԿԱԲԻՑ (տե՛ս Հ. АДОНЦ, *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, с. 231-232)։
10. ՄԱՍԹԷՌՈՍ ՈՒԽԱՑԱՑԵՑԻ, չշ. աշխ., էջ 50։ ԱՐԻՍՏԱԿԻՑ ԼԱՍՏԻՎԵՐԱՑԻՈՑ Պատմութիւն, էջ 31-32։ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ Կ., Տեք Պետրոս Ա. Գետաղարծ, Վաղարշապատ, 1897, էջ 12։

ները մշտապէս աչքի են ընկել իրենց երաժշտական արտայայտչականութեամբ, խորհրդաւոր յուղական տրամադրութեամբ եւ զարերի ընթացքում անընդհատ յդկուել ու հարստացել են<sup>11</sup>:

Մատթէոս Ուռհայեցու պատմածից յայտնի է նաև, որ երր 1047 թուին Պետրոս Գետաղարձը աքսորից եւ մի շարք տարաբախտ արկածներից յետով՝ Կոստանդիին Մոնոմախ կայսեր կողմից հրամիրում է Կոստանդնուպոլիս, նա իր հետ է տանում մի քանի հարիւրի հասնող սպառապէն հեծեալ ազատներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, որոնց թուում էին նաև երաժիշտները<sup>12</sup>:

Շարականների հեղինակներին վերաբերող միջնադարեան ցուցակները մատնանշում են Պետրոս Գետաղարձին որպէս Մարտիրոսաց, Ննջեցելոց եւ Մանկունք կոչուող երգերի յօրինող, այսպէս՝ «Պետրոս Գետաղարձն՝ զՀանգստական շարականս, զՄարտիրոսացն եւ բազում» ի Մանկուեացն»<sup>13</sup>: Սակայն, ինչպէս գիտենք, Մարտիրոսաց եւ Ննջեցելոց շարականները ստեղծուել են տարրեր ժամանակներում եւ տարրեր անձանց կողմից<sup>14</sup>, ուստի եւ Պետրոս Գետաղարձի հեղինակումների գատումը ներկայումս դիւրին չէ: Այն կը պահանջի առանձին մանրակրիփտ հետազոտական աշխատանք: Ննջեցելոց կանոնի մէջ են, օրինակ, տուեալ դէպքում մեզ հետաքրքրող հեղինակներից՝ Սարգիս Սանահնեցու երգած «Սարսափելի որումամբ» Բկ Տէր յերկնիցը եւ Յակոր Սանահնեցու «Յանսկզբնական ծոցոյ հօր» Գկ Ողորմեա շարականները, որոնց կ'անդրադառնանք քիչ աւելի ուշ:

Պետրոս Գետաղարձի կապակցութեամբ յատկապէս նշելի են առաւտուեան ժամերին երգուող Մանկունք կոչուած շարականները, որոնք Շարակնոցում կազմում են մի շարք սրբերին ծօնուած մէկական երգեր: Շարակնոցի մէջ կանոնացուած յատուկ մանկունքներ յօրինած երկու նշանաւոր հեղինակներից մէկը՝ Պետրոս Գետաղարձն է, իսկ միւսը՝ Ներսէս Շնորհալին: Լաս եղած տուեալների, Պետրոս Կաթողիկոսի գրչին պատկանող Մանկունքներից են սրբոց Սուրբասանց «Մտուգութեամբ տեղեկացեալ», Ուկեանց «Որբ արժանաւորեցայք»:

11. Ջրօնհէքի ծէսի երաժշտական բազագրիչ մասին աւելի մանրամասն տե՛ս մեր յօրուածը՝ «Ջրօնհէքի եւ ոտնուայի կամունքները Մաշտոց ծիստանում», Էջմիածն, 1986, թիւ Ա., էջ 40-49:

12. ՄԱՏԹԵՈՍ ՈՒՐՑԱՑՑՈՒ, նշ. աշխ., էջ 104:

13. ԱՆԱԼԻՍԱՆ Հ., Հայկական մատենագիտուրիմ, հու. Ա., երեան, 1955, էջ LXVI-LXVIII:

14. Ինչպէս յայտնի է, Մարտիրոսաց կարգը ըստ միջնադարեան ցուցակների վերացրում է նաև. Ստեփանոս Մինեցուն, իսկ Հանգստական շարականները ըստ Մարգիս երկցի ցուցակին՝ վերագրում են անգամ ներսէս Պարթևէին. «ԶՀանգստական» սուրբ ներսէս Պարթևէն ասաց»: (տե՛ս ԱՆԱԼԻՍԱՆ Հ., նշ. աշխ., էջ LXVI) ինչ որ ի վերջոյ գուրեկ չէ որոշակի տրամադրանութիւնից, եթէ ի նկատի սանենանք այդ երգասացութիւնների հնագոյն ծագումն ու կիրառութիւնը:

Առողմանց «Աղաչեմք զքեղ Տէր», Սանդուխս կոյսին, Դաւիթ Դունեցուն, Կիրակոսին եւ Յուղիտային նուիրուած շարականները, ինչպէս նաև սրբոց Վարդանանց կանոնի ԴԿ ծանր ստեղի «Արիացեալք առ հակառակն» շարականը:

Պետրոս Գետապարձի շարականների պրական արժանիքները նշելով, Կ. Կոստանեանցը արդարացիօրէն նկատել է, որ «Տէր Պետրոսի յօրինած հոգեւոր երգերի մէջ երեւում է նուրբ ճաշակ, վսեմ գաղափար եւ . . . հոգեկան վիճակի բնական արտայայտութիւն»<sup>15</sup>:

Եթէ քննելու լինենք լոկ նրա Մանկունքների, որպէս առաւել առժանահաւատ կտորների երաժշտական բազադրիչը, ապա կարող ենք եզրայանգել, որ այն գտնեւում է գրական բնագրի վերոյիշեալ արժանիքների հետ ներդաշնակ միութիւն մէջ: Բացի սրբոց Վարդանանց կանոնի, «Արիացեալք» շարականից, բոլորն էլ չափաւոր-միջակ շարժումով, տարրեր ճայնեզանակներում ընթացող, ոչ ծաւալուն, վսեմ եւ ճաշակաւոր մեղեղիներ ունեն: «Արիացեալք»ը միակն է, որ աչքի է ընկնում իր մեծ ծաւարով, աւելի բարդ եռամաս կառուցուածքով եւ զարդուրուն-յանկարծաբանական (իմպրովիզասիոն) մեղեղացին պայուների շարագասութիւնմբ:

Կանոնում այն նախադաս է ներսէս Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» Հանրայայտ շարականին եւ, ինչպէս ենթազրում է վաստակաշտա երաժշտագէտ՝ Նիկ. Թաշմիզեանը, յետագայ դարերում կրել է նաև վերջինիս եղանակաւորման ազգեցութիւնը<sup>16</sup>, մանաւանդ որ երկուսի ճայնեզանակը նոյն ԴԿն է: Տուեալ կանոնի ժամանակի ընթացքում կրած հետաքրքիր փոփոխաւթիւնների ի վերջոյ յանգել են այս երկու շարականների յարատեւմանը, որով Պետրոս Գետապարձի եւ ներսէս Շնորհալու Վարդանանց յիշառակը յաւերժացնող շարականները յառնում են որպէս հայ հոգեւոր մոնողիկ երգարաւեստի հոյակերտ մի դիպուիլիս, ներդաշնակօրէն լրացնելով միմեանց:

Անիում գործած երաժշտական արուեստի հետ առընչուող երեւելի դէմքերից է՝ քաղաքական գործիչ, փիլիսոփայ և քերական՝ Գրիգոր Մաղիստրոս Պահաւունին, որ յայտնի էր նաև իրքեւ շարականագիր եւ տաղասաց: Յաւօք, այդ մասին պատմոյ ուղղակի տուեալները չափանց սակաւ են: Սակայն, Գր. Մաղիստրոսի նամակներում եւ «Մեկնութիւն քերականին» երկասիրութեան մէջ ցրուած երաժշտար-

15. ԿՌՍՍԱՆԵԱՆՑ կ., Տեր Պետրոս Ա. Գետապարձ, էջ 48:

16. ԹԱՀՄԻՉԱՆԱԿ կ., Գիրգոր Նարեկացին իւ հայ երաժշտութիւնը Ե-ԺԵ. դդ., Երեւան, 1985, էջ 236-237: ԱԼԻՇԱՆ Հ. Կենթենի, Արիացեալք համարում էր ներօւս Շնորհալու գործ, առ ն Շնորհալի եւ պարագայ իւր, Վեհանիկ, 1873, էջ 82: Եռյա կարծիքն էր նաև ՏՆՏԵՍԵԱՆը, առ ն Կիրազիր երգոց Հայաստանից սուրբ եկեղեցւոյ, Բ. ապ., Խմբանպուր, 1933, էջ 137, Հաւասարար հետեւելով Կիրակոս Գանձակեցու Համբորդամին, առ ն ԿիրԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, Պատմութիւն հայոց, աշխ. Կ. Ա. Մելիք Շահնշանեանի, Երեւան, 1961, էջ 119:

ունատին վերաբերող ասոյթները վկայում են նրա քաջատեղեակ եւ նախանձախնդիր լինելը թէ՝ իր ժամանակուան գուսանական երաժշտութեան կենդանի պրակտիկայի, թէ՝ վանքերում աւանդուող եւ զարգացող հոգեւոր երգարուեստի եւ թէ՝ երաժշտութեան տեսութեան հարցերի հանդէպ: Ուստի՝ հետագոտական չատ գրաւիչ խնդիր էր դառնում Գրիգոր Մագիստրոսի սեփական երաժշտական հեղինակումների որոնումը:

Սրդէն այն փաստը, թէ Գրիգոր Մագիստրոս յիշատակում է շարականագիրների միջնադարեան ցուցակներում, ինքնին ուշագրաէ: Ճիշտ է, նրա անունը հանդիպում է միայն Գրիգոր Տաթևացու ցուցակից սկսած, սակայն բացառուած չէ, որ եռամեծ փիլիսոփայի եւ հսկարդի ձեռքի տակ եղել են նիւթեր, որոնք մեզ չեն հասել: Հստ այդ եւ անանուն կոչուող ցուցակի, Գրիգոր Մագիստրոսին է վերաբերուում Խաչի նաւակատեաց Ե. օրուան «Զորս ըստ պատկերի քում» Գ. Ռուրմեան: Այդ կապակցութեամբ անհրաժեշտ է յիշեցնել, որ Հ. Գ. Աւետիքեանը, յենուելով Ստեփանոս Ասողիկի, Ներսէս Լամբրոնացու եւ Վարդան Արեւելցու տուեալների վրայ, Համոզիչ կերպով ապացուցեց, որ տուեալ շարականը կ. գարի իշխան Աշոս պատրիկ Բագրատունույորինածն է, կապուած փրկչական պատկերի եւ Դարոնքում իր ջանքերով եկեղեցու կառուցման հետ<sup>17</sup>: Ի դէպ, «Զորս ըստ պատկերի» շարականի կ. գարի ծնունդ լինելու ակնարկը առկայ է նաև շարականագիրների անանուն խմբագրութեան ցուցակում, որտեղ Գրիգոր Մագիստրոսի հեղինակ լինելը չի բերում միանշանակ ձեւով, այլ ասում է այսպէս: «Գրիգոր Մագիստրոսն՝ զԶորս ըստ պատկերին, զոր այլք իսահակայ Զորափորեցւոյ տան»<sup>18</sup>:

Մեր օրերում երաժշտագէտ Նիկ. Թահմիգեանը դիտական շրջանառութեան մէջ զբեց այն պնդումը, թէ Գրիգոր Մագիստրոսը հեղինակել է ոչ թէ Խաչի նաւակատեաց Ե. օրուան վերոյիշեալ Աղորմեան, այլ նոյն կանոնակարգի Դ. օրուան «Խաչն կենարար» Օրհնութիւնը<sup>19</sup>: Նոյնը կրկնեց նաև շարականների ժանրին նուիրուած իր ուսումնասիրութեան մէջ գրականագէտ Գր. Յակոբեանը, աւելցնելով, որ այդ փաստը պարզապէս զրիշների անփութութեան հետեւանքով սխալ է արձանագրուել<sup>20</sup>: Ոչ մէկը, ոչ էլ միւսը այդ կապակցութեամբ ո՞րեւէ

17. Անենքնեան ՀԱՅՐ ԳԱԲՐԻԵԼ, Բացատրութիւն շարակամաց, Վենետիկ, 1814, էջ 521-523: Այդ կարծիքն է պաշտպանել նաև Ե. Տնահանը, շարականագիրների կազմած իր ցուցակում, առ Տնտեսեան Ե. Մ., Նկարագիր երգոց..., էջ 136:

18. ԱնՍՍՍԱՆ Յ. Ա. աշխ.:

19. Տե՛ս ԹԱՀՄԻԶԵԱՆ Ն. Կ., Ներսէս Շնորհակին\* երգահան եւ երաժշշտ, Երեւան, 1973, էջ 20: «Անկեփորիկ», Երեւան, 1982, էջ 33:

20. ՅԱԿՈԲԵԱՆ Գ.Բ., Շարականների ժանր հայ միջնադարեան գրականութեան մէջ Ե-ԺԵ. դդ., Երեւան, 1980, էջ 203:

աղբիւր կամ փաստարկ չեն բերում: Պարզուեց, որ այդ պնդման համար հիմք հանդիսացած աղբիւրը, աւելի ճիշտ միակ թուուցիկ յիշատակութիւնը ժջ-ժիկ դգ. տաղասաց Յակոր Սսեցու շարականագիրներին նուիրուած 35 անից բաղկացած ոսանաւորն է (տե՛ս տուն 29), որի թիմս այլ ցուցակների եւ նմանատիպ տաղաչափուած քերթուածների իր «Հայկական մատենագիրութիւն» աշխատութեան մէջ զետեղել է Յ. Անասեանը: Այն խորագրուած է «Ուտանաւոր վասն ցուցանելոյ զերգող շարականաց յօդեալ ըստ նախագիծ տանց»<sup>21</sup>: Բաւակա՞ն է, արդեօք, այս փաստը, տուեալ շարականը Մագիստրոսին անվերապահօրէն ընծայելու համար: Յատկանշական է, որ Հայր Աւետիքիան լուութեամբ է անցնում «Խաչն կենարար» շարականի հեղինակի կողքով, հաւանարար ենթադրելով, որ Խաչի տօներին նուիրուած շարականների մեծ մասի պէս այն եւս պատկանում է Սահակ Չորափորեցու զրչի<sup>22</sup>: Շարականագիրների ցուցակների հաղորդածին չի՝ անդրադարձել նաև Գրիգոր Մագիստրոսի թղթերի առաջին հրատարակող եւ նրա կենանքին ու գրական գործունէութեանը նուիրուած բովանդակալից առաջարանի հեղինակ՝ Կ. Կոստանեանցը, ըստ երեւոյթին, արժանահաւասար չամարելով զրանք<sup>23</sup>: Մեր կարծիքով, «Խաչն կենարար» շարականի հետ կապուած պնդումը թերեւս կարելի էր կատարել ինկատի ունենալով Գրիգոր Մագիստրոսի «Ներբողեան ի Սուրբ Խաչն Քրիստուունկալ» եւ «Յաղագս խաչանշան գաւականին»<sup>24</sup> քերթողական գործերի բովանդակութիւնը եւ ոճական առանձնայատկութիւնները, մինչ այժմ անտեսուել է ուսումնասիրողների կողմից: Սակայն, որքան էլ զա գրաւիչ թուայ, տուեալ հարցը առայժմ թողնում ենք առկափ, յուսակով, որ նոր հետազոտութիւնները ի վերջոյ լոյս կը սփռեն Գրիգոր Մագիստրոսի Շարակնոցում տեղ գտած կամ պարականոն հեղինակումների վրայ:

Եւս մէկ երաժշտաբանաստեղծական կաոր է հասել մեզ Գրիգոր Մագիստրոսի անունով: Դա Յովհաննէս Մկրտչին նուիրուած «Կարապետ սուրբ հաւատոյ» սկզբնատող ունեցող տաղն է, որ խաղագրուած վիճակում տեղ է գտել մի շարք ձեռագիր Գանձարաններում<sup>25</sup>: Այն օժառուած է, «Կարապետին տաղ» ակրոստիխոսով<sup>26</sup>: Մեզ ծանօթ գրչա-

21. Տե՛ս ԱՆԱՍԵԱՆ Յ., նշ. աշխ., էջ LXXXII-LXXXIV:

22. ԱԼԵՔԻՔԵԱՆ Հ. Գ., նշ. աշխ., էջ 515:

23. ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, Թղթեր, տե՛ս Առաջարանը:

24. Տե՛ս Տաղասացուրիւթ Գրիգորի Մագիստրոսի Պահյաւունոյ, Վենետիկ, 1868, էջ 80-92:

25. Եռյն տեղում, էջ 93-94:

26. Հաւանարար այն յօրինել է սուրբ Կարապետի ժամատան կառուցման արթով, ինչպէս հաղորդել է Մ. Զամշեան, յենուելով Արիստակէս Լասոփերացու, Ներսէս Շնորհարու եւ Վարդան պատմիչի տուեալների վրայ, տե՛ս ԶԱՄՇԵԱՆ Մ., Պատմութիւն Հայոց, Հառ. Բ., Երևան, 1984, էջ 926:

զրերից երեքի մէջ Հեղինակի մասին կան շատ որոշակի ցուցումներ. այսպէս՝ «Տաղ Ցովանու ի Գրիգորէ Մագիստրոսէ»<sup>27</sup>, «Տաղ ի Մագիստրոս իշխանէ եւ պարոն Գրիգորէ»<sup>28</sup> եւ «Տաղ ի Մագիստրոսէ»<sup>29</sup> ձեւերով։ Ցաւօք, տաղի մելքնդին գանձարանային տասնեակ այլ երաժշտաբանաստեղծական միաւորների պէս՝ չի հասել մեր օրերին։

Բագրատունեաց օրօք գործած շարականագիրներից յիշատակելի են մէկական, սակայն բնորոշ երկերով յայտնի Ստեփանոս Ապարանցին՝ Խաչի նաւակատեած Գ. օրուան «Սրբութիւն սրբոց» Գ. Օրէնութեամբ, Սարգիս Սեւանեցին՝ ննջեցելոց կանոնի «Սարսափելի որոտմամբ» ԲԿ. Տէր յերկնիցով եւ Յակոբ Սանահնեցին՝ նոյն կարգի «Յանսկզնական ծոցոյ հօր» Գ. Ողորմայով։ Թէե հայագիտութեան մէջ նշուած շարականագիրներին այս կամ այն չափով անդրադարձել են Աւետիքիանը, Զամչեանը, Ամառունին, Յակոբեանը եւ Թահմիգեանը, սակայն վերոյիշեալ շարականների երաժշտական բաղադրիչը առ այսօր չի ներկայացուել ընթերցողին եւ չի քննուել ըստ արժանություն։ Մինչդեռ, այդ շարականները օժտուած են երաժշտաբանաստեղծական որոշակի արժանիքներով եւ յատկանչական են անուններով ո՞չ այնքան հարուստ Ժ-ԺԱ. գարերի համար։ Երեքն էլ ունեն անուանական ակրոստիխոսներ, ինչ որ աւելի է որոշակիացնում Հեղինակութեան հարցը եւ գրուած են ի. զարից հայ շարականներութեան մէջ արմատաւորուած բիւզանդական կոնդակի ժանրից սերող կցուրդի ձեւով։

Սրանցից ամենածաւալունը (ինը տուն) Ստեփանոս Ապարանցու «Սրբութիւն սրբոց» շարականն է<sup>30</sup>։ Ըստ աւանդութեան, այն յօրինուել է 983 թուին՝ Վասիլ կայսեր կողմից Ստեփանոս Ապարանցուն, որ Մոկաց եպիսկոպոսն էր, մի քանի նշանաւոր սրբութիւնների եւ զրանց թուում Ապարանց Ս. Խաչի ընծայման կապակցութեամբ<sup>31</sup>։ Այդ առիթով է գրել նաև Գրիգոր Նարեկացին իր Ապարանից Խաչի պատմութիւնն ու ներբողը, նույրաբերելով զրանք Ստեփանոս Ապարանցուն<sup>32</sup>։

27. Մատոսից անուան Մատենագրաբան, 2հու. թիւ 8188, 1460 թ., թղ. 240ա:

28. Նոյն տեղում, 2հու. թիւ 674, 1474 թ., թղ. 213ա:

29. Նոյն տեղում, 2հու. թիւ 423, 1742 թ., թղ. 171թ-2:

30. Որոշ միջնագրաբան ցուցակներ վերագրում են տուեաներ Օրէնութիւնը Ստեփանոս Միւնեցուն, սակայն տակաւին միջնագրում ճշգրտուել եւ այլպէս էլ հաստատուել է հայագիտութեան մէջ Ստեփանոս Ապարանցու Հեղինակութիւնը պաշտպանող տեսակէտը։

31. Տե՛ս ԱՃԱՒԵԱՆ Հ., Հայոց ամենամունիսի բանարան, Հառ. Դ., 1943, էջ 607-608։ ԱԱԵՏԻՔԵԱՆ Հ. Գ., Բացատրութիւն շարականաց, ՀՀ. այլու., էջ 515։

32. Գրիգոր ՆԱՐԵԿԱՑԻ, Մատենագրութիւնն, Վենետիկ, 1840, էջ 380-381, 422։

Շարականը ընթանում է երրորդ ձայնեղանակում և ունի վառ արտայատուած զիսպաքնարական բնոյթ: Այն աչքի է ընկնում ոճի մաքրութեամբ, վանկական եւ ծորեցային սկզբունքների ներդաշնակ գուգորդումով, մոտիվային տարրերակման կիրառութեամբ՝ կապուած ազատ բարդուանեայ խառն ոտանաւորի ձեւի օգտագործման հետ: Ընտրուած ձայնեղանակի լուսաւոր երանգաւորում ունեցող վերին հատուածի գերիշխումը հաղորդում է շարականին համապատասխան տրամադրութիւն՝ ի տարրերութիւն ԳԶ.ում ընթացող շատ ու շատ երգասացութիւնների (տե՛ս նօթային օրինակ 1): Հայր Աւետիքեանը այն որակել է որպէս «գերապանծ շարական», առաջիններից մէկը գնահատելով նրա գեղարուեստական արժանիքները<sup>33</sup>:

Շարակնցում Ստեփանոս Ապարանցու շարականը տեղադրուած է Խաչի նաւակատեաց Դ. օրուան կանոնաւմ: Այդ կանոնը կազմուած է երկու Օրհնութիւնից եւ Հարց կոչուող մասից, որ փոխ է առնուած Շողակամթի կանոնից: «Սրբութիւն սրբոց»ը հանդիսանում է կանոնի երկրորդ Օրհնութիւնը: Մեր ամենամուռ շարականագէտներից Ս. Վ. Պ. Ամասունին գտնում է, որ Դ. օրուան երգուելիք «Հարցը եւս՝ իւր սարօքն յօրինել է Ստեփանոս Ապարանցին»<sup>34</sup>: Անշուշտ, հետաքրքրիթ կը լինէր ձեռքի տակ ունենալ Ստեփանոս Ապարանցու զրչին պատկանող նաեւ այլ գործեր, սակայն պարզ չէ, թէ ի՞նչն է հիմք հանդիսացել Ամասունու տուեալ ենթագրութեան համար:

Երկրորդ շարականը Հանգստաեան կարգի Աւագ կողմ «Սարսափելի որամամբ» Տէր Յերկնիցն է (վեց տուն), որի տնապլուխները յօդում են «Սարգիս» անունը: Հեղինակը օգտագործել է այստեղ համբական (նոր կամ չին ժամանակներու) երկանգամ 7 վանկանի ոտանաւորի ձեւը, զուգորդելով տների ներսում այդ ձեւի երկու յայտնի տարրերակը: Զուտ վանկական կառուցուածք ունեցող եւ սակմուսափից շարականներին յարող այս կտորը թւում է, թէ համեստ երաժշտական արժանիքներ ունի: Սակայն, միապաղապութիւնը թուացեալ է: Շարականի անփոփոխ, ներքին ոյժ եւ հաստատակամութիւն արտայայտող մեղեկու բազմակի կրկնութիւնը, զուգորդուելով բանաստեղծական խոսքի մէջ պատկերուած ահեղ գատաստանի տիսարաններին, ձեռք է բերում գեղարուեստական հնարանքի նշանակութիւն (տե՛ս նօթային օրինակ 2):

Հետաքրքրական է նաեւ շարականի հեղինակի հարցը: Սովորաբար, այն համարում է Սարգիս Կաթողիկոս Մեւանեցու հեղինակումը, սակայն, մեր կարծիքով, աւելի հաւանական է, որ նրա հեղինա-

33. ԱՒԵՍԻՔԵԱԿԱՆ Դ., Կ. աշխ., էջ 515:

34. ԱՄԱՍՈՒՆԻ ՎՐԴ. Ս., Հին և նոր պարականուն կամ անվաեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 128-129:

կը լինի Սարգիս Վարդապետ Սեւանեցին, Սեւանայ վանքի նշանաւոր առաջնորդը, որին իր մօտ հրաւիրեց Գաղիկ Բ. թագաւորը՝ միասին ուսմամբ պարապելու համար եւ, որ թղթակցում էր Գրիգոր Մազմանուի հետ<sup>35</sup>: Սարգիս Վարդապետ Սեւանեցին ունի յունարկնից թարգմանուած ննջեցեց նուիրուած մի ճառ, որի տպաւորութեան տակ, գուցէ, գրուել է եւ մեզ հետաքրքրող չարականը<sup>36</sup>: Պարականոն չարականների մէջ էլ կայ մի չարական (Մանկունք ԳԿ), որի ակրոս-տիխոսը կազմում է «Սարգիս» անունը, սակայն այսուեղ յաւելեալ զժուարութիւն է յարուցում չարականի սուրբ Սարգսին նուիրուած լինելու հանգամանքը, ինչ որ անորոշ է թողնում հեղինակային պատ-կանելիութեան հարցը<sup>37</sup>:

Երրորդ ներկայացուող չարականը ԺԱ. դարի հեղինակ՝ Յակոբ Սանահնեցու «Յանսկզբնական ծոցոյ Հօր» Հանգստեան չարականն է (Հինգ տուն): Այստեղ նոյնպէս օգտագործուած է ազատ բարդուունեայ խառն ոտանաւորը, ինչ որ հաւաստում է, որ տուեալ տաղաչափական ձեւը, կիրառուելով առաջին անգամ Գրիգոր Նարեկացու տաղերգու-թեան մէջ, գրաւել է նաև ժամանակակից եւ յետնորդ ա'յ չարակա-նազմիքների ուշագրութիւնը եւ մշակուել նրանց կողմից: Գերազան-ցապէս վանկական կառուցուածքի այս երգասացութիւնը աչքի է ընկ-նում քնարական, աղաչական բնոյթով, ինչ որ բնորոշ է Ողորմեա-ներին<sup>38</sup>: ԳԿ. ձայննեղանակը, ինչպէս եւ բուն ԳԶ.ը յաճախ են ըն-արուել աղաչական-զղջական, ընդհանրապէս քնարական երանգաւո-րում եւ բովանդակութիւն ունեցող չարականների համար<sup>39</sup>: Բազ-մաստուն կառուցուածքը եւ նրա սահմաններում որպէս գեղագիտական սկզբանք կիրառուած մեղեդային կրինողութիւնը տուեալ չարակա-նում, ինչպէս եւ նախորդ օրինակներում, նպաստում են ընդհանուր զգայական տրամադրութեան խորացման եւ կանոնի խորհրդի բովան-դակութեան բացայաշտման (տե՛ս Խօթային օրինակ 3): Հստ Աճառ-եանի, Յակոբ Սանահնեցուն պէտք է վերագրել նաև Սուրբ Յակոբին

35. Տե՛ս ԱՃԱՌԵՑԱՆ Հ., Հայոց անձնանութեանի բառարան, Հառ. Դ., էջ 410:

36. ԶԱՐՔԱՆԱԼԱՑԱՆ Հ. Գ., Պատմուիրին հայ իին դպրութեան (Դ-ՓԳ. դդ.), Վե-ներիկ, 1897, էջ 591:

37. ԱՄՄԱԾՈՒՆԻԵ Ս., նշ. աշխ., էջ 58, տե՛ս նաև ՅԱԿՈՒԹԵԱՆ ԳՐ., նշ. աշխ., էջ 311:

38. Աւետիքեանը «Վայերուչ և հոգեշարժ» նկատելով սոյն չարականի կազմութիւնը, ենթադրում է Յակոբ Կաթողիկոս Կայեցու հեղինակութիւնը, տե՛ս Բացասարութիւն չարականաց, էջ 655:

39. Դնեմու կ-Ը. գգ. ԳԶ.ի որոշակի արտայայտչականութիւնը ստացել է իր արտայայ-տութիւնը Մովսէս Սիւնեցու բնորոշման մէջ «Երրորդ ձայն՝ զիգական աղաչո-ղութեան ունի»: Տե՛ս ԹԱՂՄՄԴՅԱՆԱՆ Ն., Մովսէս Սիւնեցին եւ Յուա «Յաջագա կար-գաց եկեղեցւոյց գրութէր», «Հրաբրէ Հասարակական գիտութիւնների», 1972, թիւ 11, էջ 90: Տե՛ս ԱՐԵՒՇԵՍՏԵՎԱՆ Ս. Ս., Քարոզ ժամեր հայ հոգեւոր երգաստեղծու-թեան մէջ, «Պատմա-բանասիրական հանգչա» 1992, թիւ 2-3, էջ 206:

Աղեղիս Աշարանցի



նուիրուած՝ շարականը, որի ծայրակապ է «Յակոբ» եւ, որ միջնադարեան որոշ ցուցակներում ընձայւում է Ներսէս Շնորհալու<sup>40</sup>: Յաւօք, այս գէպքում հանդիպում ենք նոյն գժուարութեան, ինչ որ Սարգիս Սեւանեցուն սուրբ Սարգսին նուիրուած շարականի վերագրման կապակցութեամբ, որն այս գէպքում եւս բաց է թողնում տուեալ հարցը:

Դիտելի է, որ վերը ներկայացուած հեղինակների շարականները իրենց բանաստեղծական եւ երաժշտական գծերով սերտօրէն կապուած են է-լ. գարերի հայ շարականներութեան մէջ բիւրեղացած յատկանիշների հետ: Պատկանելով «չափաւոր-միջակ» տիպի շարականներին, նրանք լիովին պահպանելու են իրենց անազարտութիւնը եւ գուսպ գեղեցկութիւնը:

Անիում է կրթուել եւ անց է կացրել իր կեանքի մի զգալի մասը միջնադարեան Հայաստանի նշանաւոր գիտնական, հանրագիտակ մըրտածող, բանաստեղծ եւ երաժիշտ Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրը: Նա հանդիսացել է «մեր վերածնութեան նոր մտաւոր հոսանքի առաջին արտայայտիչներից մէկը», ըստ Մ. Արեգեանի դիպուկ բնորշման<sup>41</sup>:

Յայտնի է, որ Յովհաննէս Սարկաւագը եղել է Անիի վարդապետարանի ուսուցչապետը, շարունակել է Գրիգոր Մագիստրոսի սկած կրթական համակարգի բարեփոխումները: Իր նուանգուն եւ բազմակողմանի գործունէութեան չնորհիւ, Անիի Յարոցը աննախադէպ ծաղկում է ապրել, պատրաստելով հայ մշակոյթի յիտագայ զարգացման համար պիտանի բազմաթիւ աշակերտներ:

Պէտք է նշել, որ Յովհաննէս Իմաստասէրի հարուստ ժառանգութիւնը վաղուց ի վեր զրաւել է հայագէտների ուշագրութիւնը: Բազմաթիւ հետազոտողների ջանքերով աստիճանաբար երեւակուել է նրա աւանդը տիեզերագիտութեան, տամարագիտութեան, թուարանութեան, կենսաբանութեան, փիլիսոփայութեան եւ էսքետիկայի մէջ:

Ստուերում չի՝ մնացել նաև Յովհաննէս Սարկաւագի վաստակը որպէս շարականապիք եւ երաժշտութեան գեղագիտութեան հարցերը նոր զիտական մակարդակի բարձրացած տեսարան: Այս կապակցութեամբ յիշարժան են նիկ. Թահմիգեանի «Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրը եւ հայ միջնադարեան երաժշտական մշակոյթը» ծաւալուն յօդուածը<sup>42</sup> եւ Կ. Միրումեանի «Յովհաննէս Սարկաւագի աշխար-

40. ԱՃԱԽԵԱՆ Հ., նշ. աշխ., Հայ. Գ., 1946, էջ 484:

41. ԱՐԵԳԵԱՆ Մ., Երեկը, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Երեւան, 1970, էջ 63:

42. ԹԱՀՄԻԳԵԱՆ Կ., Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրը եւ հայ միջնադարեան մշակոյթը, «Բագմագլոց», 1978, թիւ 3-4, էջ 328-356:

Հայեացքը» մենագրութեան երաժշտութեան էսքիզիկայի հարցերին նուիրուած ենթագլուխը<sup>43</sup>:

Ժամանակի աշխարհականացման խորացող ոգին իր արտայայտութիւնն է ստացել, մասնաւրապէս, Սարկաւագի երաժշտական էսքիզայի մէջ ներմուծած մի քանի կարեւոր գաղափարներում, որոնք արժէր այսուղ յիշեցնել: Յենուելով նախորդ գարերի այդ ասպարէզում ունեցած հայ մտածողների նուաճումներին, նա զարգացրել է Դաւիթ Անյազմի կողմից մշակած ձայնի մասին ուսմունքը, հարսացրել այն իր ժամանակի պատկերացումների եւ լսողական փորձի համաձայն: Նա առաջինն էր, որ արծարեց գործիքային երաժշտութեան ինքնարաւ նշանակութեան գաղափարը, հակադրուելով ինչպէս անտիկ փիլսոփաներին, այնպէս էլ՝ քրիստոնէական գաղափարախօսութեան: Յովհաննէս Իմաստասէրը հանգէս է եկել որպէս Արիստոքրէնի տեսակէտների կողմանակից, այդ հարցում նոյնպէս խախտելով վաղ միջնադարից եկող աւանդոյթը, որ մշտապէս իրեն ուզեցոյց է ունեցել Պիտթագորեան դպրոցը: Լսու Սարկաւագի՝ երաժշտութիւնն օժտուած է ներգործութեան յուղական մեծ ոյժով եւ ճանաչողական ֆունկցիայով: Իր «Բան իմաստաթեան» հանրայայտ քերթուածքում, նա առաջ է քաշել բնութեան՝ որպէս արուեստների եւ մասնաւրապէս, երաժշտութեան հիմքի, բնօրրանի եւ ուսուցչի գաղափարը, որոշակի իմաստով կանխագրելով եւրոպական Վերածնութեան մի շարք փիլթոփառագէտներին:

Յովհաննէս Իմաստասէրը կարեւոր զեր է խաղացել իր ժամանակուան սաղմոսերգութեան բարեկարգման մէջ: Սազմոսերգութիւնը անցանկալի աղաւաղումներից պաշտպանելու նպատակով, նա Հաղբատի մատենագրանում գտել է Ե. գարից պահպանուած ընտիր մի սաղմոսարան, որ տուել է ընդօրինակելու եւ տարածել ողջ Հայաստանում<sup>44</sup>: Ուշագրաւ է նաև հին ձեռագրերից մէկի յիշատակարանի հաղորդածն այն մասին, որ Սարկաւագ Իմաստասէրը սպասաւորել է Անիի Կաթողիկէ և կեղեցում պաշտաներգութեան ժամանակ<sup>45</sup>:

Որպէս շարականագիր՝ Յովհաննէս Սարկաւագը նոյնպէս ունի իր որոշակի աւանդը Շարակնոցի հարստացման մէջ: Նա մի քանի ակնառու շարականների ստեղծող է: Վերջին տարիների ուսումնասիրութիւնները ցոյց են տուել<sup>46</sup>, որ նա հեղինակել է ո՛չ միայն Կիրակոս Գանձակեցու յիշատակած Ղեւոնդեանց կանոնի «Պայծառացան այսօր»

43. ՄԻՐՈՒՄԵԱՆ Կ., Յովհաննէս Սարկաւագի աշխարհայացքը, Երևան, 1984, էջ 207-223:

44. Մաշտոցի անուան Մատենագրանում, Զեռ. թի. 4913, թղ. 107r-108w:

45. Նոյն աեղում, Զեռ. թի. 666, թղ. 250w:

46. ԹԱՀՄԱՉԵԱՆ Ն., Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրը եւ հայ միջնադարին երաժշտական մշակոյքը, էջ 21-28: Նոյեմբեր, Գրիգոր Նարեկացին եւ հայ երաժշտութիւնը Ե-ԺԵ. դդ., էջ 235, 239:

գողարիկ ճաշուն, այլ նաև նոյն կանոնի «Անճառելի բանդ Աստուած» Մանկոնքը, Հորիսիմեանց կանոնի «Անսկզբնական բանն Աստուած» Համբարձին եւ Վարդանանց յիշատավին նուիրուած կանոնի «Անթառամ սիրոյ ծնունդը» Օրհնութիւնը, որ դժբախտարար, ժամանակի ընթացքում գուրս է մնացել կանոնակարգից, ինչի հետեւակրով կորսուել եւ մոռացուել է նրա մեղեղին: Այս գործերում, որոնք նշանակալից են թէ՝ գրական եւ թէ՝ երաժշտական բաղադրիչի առումով, Յովհաննէս Սարկաւագը հանդէս է զալիս որպէս բիւզանդական կոնդակի ժանրից եկող աւանդութիւնից վրայ յենուող հեղինակ: Նա հետեւում է Կոմիտաս Աղցեցու «Անձինք նուիրեալք»ի օրինակին, կերտելով վիպարքնարական չնչի բազմատուն եւ բարդ տաղաչափութեամբ զըրուած բարձրարուեստ ներքողներ, որոնք ունեն այբբենական ակրոստիխոսներ: Նախասիրած ձայնեղանակը ԴԿ. գործուածքն է, որին յաճախ են զիմել ազգային հերոսներին եւ նահատակներին մեծարող շարականազիքներն իրենց երգասացութիւններում: Ակներեւ է, որ, օրինակ, Ներսէս Շնորհալին իր «Նորահրաշ»ը եղանակաւորելիս, աչքի առաջ է ունեցել Պետրոս Գետադարձի եւ Յովհաննէս Սարկաւագի այդ ձայնեղանակում ծաւալուող բարձրարտէք նմոյշները:

Յովհաննէս Սարկաւագի անունով պահպանուել են նաև յարութեան մի տաղ («Մագումն փառաց էին, միայն միածին որդին» սկզբանատողով), որ ինչպէս նրա խորագիրն է հաղորդում, կատարուել է բովանդակ տարրուան իւրաքանչիւր Կիրակի օրը<sup>47</sup>, ինչպէս նաև «Յիսուս հաւր միածին, զուզապատի եւ գոյակից բան եւ ծնունդ» սկզբանատող ունեցող ողբը, որն օժտուած է ուշազրա ծայրակապով «Յովհաննէս քահանայ Սարգսի Մեծի խնդակ Ած. կենդանի»<sup>48</sup>: Յայտնի է նոյնիսկ տուեալ ողբի ձայնեղանակը՝ ԲԿ. աւազ կողմ, ինչ որ ամենեւին միշտ չէ, որ նշուել է տաղատիպ ստեղծագործութիւնների՝ այդ թւում՝ ողբերի կապակցութեամբ:

Ի մի բերելով ասուածը, կարող ենք եղբակացնել հետեւեալը: Շարակնոցում գաւերացուած Անիի հետ կապուած շարականազիքների հոգեւոր երգերը վկայում են, որ նրանք իրենց մէջ խտացրել են Ե-Լ զարերի հայ հիմներգութեան յաւագոյն գեղարուեստական ձեռքբերումները, ընդլայնելով աւանդական թիմանիրի շրջանակը: Առանձնակի հնչեղութիւն է ստացել նրանց գործերում հայրենասիրական թեման՝ կապուած ժամանակի իրողութիւնների եւ ազգային-ազատագրական պայքարի հետ: Այդ շարականազիքները զգալի չափով նախապատրաստել են Կիլիկիայի հեղինակների ստեղծագործութեան մէջ իրագործած յետազայ մեծ թոփչըը:

### ԱՆՆԱ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ

47. Մաշտոցի անուան Մատենագարան, Զեռ. թիւ 3503, 1394 թ.:

48. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Ա., Յովհաննէս Խաստանէրի մատենագրութիւնը, Երևան, 1956, էջ 325-326:

## Résumé

## LA CULTURE MUSICALE D'ANI ET SES HYMNOGRAPHES

ANNA AREVCHATIAN

Ani occupe une place particulière dans l'histoire de la culture musicale médiévale arménienne. Selon les données communiquées par les historiens, sous le règne des rois Bagratides, Ani sert de cadre au développement de la musique séculière des ménestrels aussi bien que de l'art du chant spirituel. Dans les universités médiévales d'Ani, une grande place est faite à l'enseignement du chant et de la musique, à la discussion des questions d'esthétique et de la théorie de la musique; on y travaille aussi à compléter et à rédiger les recueils musico-rituels. L'office est perfectionné à Ani conformément aux notions artistiques progressistes de l'époque, tandis que les spécimens de l'art des taghs, prenant son origine de cette époque et de ce milieu, sont la manifestation évidente d'un processus de sécularisation de plus en plus avancé.

L'ambiance musicale d'Ani n'est pas sans subir l'influence d'éménants représentants de la culture médiévale arménienne, tels que les Catholicos Sarkis Sévanétsi, Pétros Guétadartz et Hovhannès Sarkavag Imastasser qui ont cultivé l'art musical et sont aussi connus comme hymnographes.

Les chants spirituels des hymnographies d'Ani, qui ont leur place dans les Charaknotz-Hymnaires, montrent des particularités musico-poétiques qui les lient étroitement aux indices cristallisés dans l'hymnographie arménienne des V<sup>e</sup>-VIII<sup>e</sup> siècles. Les genres préférés sont les différentes parties du canon, la forme fréquemment utilisée — «Kee'urd» — dérivée du Kon-dak byzantin. Le cadre des thèmes traditionnels est élargi et le thème patriotique acquiert une importance particulière en rapport avec la situation de l'époque. Ces hymnographies contribuent sensiblement à préparer le grand essor futur réalisé dans les œuvres des auteurs d'Arménie Cilicienne.

L'article présente pour la première fois le compositeur musical des hymnes-charakans de Stépanos Aparantsi (X<sup>e</sup> s.), de Sarkis Sévanétsi (X<sup>e</sup>-XI<sup>e</sup> s.) et de Yakob Sanahnétsi (XI<sup>e</sup> siècle) en notation européenne.